

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՆԱՐԵԿԱՑԻԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՍԵՅՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Ինչպես ամեն մի ազգի, այնպես էլ հայ մշակույթի պատմության մեջ կան շրջաններ կամ առանձին մտածողներ, պատմիչներ, բանաստեղծներ, քաղաքական-հասարակական գործիչներ, որոնց ժառանգության և գործունեության լրջմիտ ուսումնասիրության համար համակրանքն ու ցանկությունը, մեղմ ասած, անբավարար են: Դրա համար անհրաժեշտ են նաև ընդհանուր և մասնագիտական գիտելիքների հարուստ պաշար, ինչպես նաև հումանիտար գիտելիքի մեկնաբանության արդյունավետ մեթոդաբանական մոտեցումների համադրման ու կիրառման ունակություն: Խոսքը վերաբերում է հատկապես այնպիսի մտածողներին, ովքեր դարակազմիկ երևույթ են հայոց մշակույթի պատմության մեջ, և որոնց հոգևոր ժառանգությունը մեծ ազդեցություն է ունեցել թե՛ իրենց ժամանակաշրջանի և թե՛ հետագա դարերի մշակույթի զարգացման վրա: Բնականաբար, այդպիսի մտածողների ժառանգությունը գտնվել է տարբեր դարերի հետազոտողների ուշադրության կենտրոնում, և ժամանակի ընթացքում նրանց մասին կուտակվել է հարուստ գրականություն, ստեղծվել են տեսություններ, արմատավորվել են տեսակետներ:

Այդպիսի մեծություններից է միջնադարի հանճարեղ հայ բանաստեղծ Գրիգոր Նարեկացին, որի անձի ու ստեղծագործությունների մասին ոչ միայն մասնագետներն են գրել ու մեկնաբանել, այլև ժողովուրդն է հյուսել լեգենդներ ու զրույցներ: Տարբեր ժամանակներում Նարեկացու կյանքին, գործունեությանը և ստեղծագործություններին շատերն են անդրադարձել, շատ բան է պարզվել ու բացահայտվել, տարբեր կարծիքներ են արտահայտվել նրա անձի և ստեղծագործությունների մասին, սակայն, այդուհանդերձ, հարցականներ ավելի շատ են մնացել: Այդ կարգի հարցականների պատասխաններ գտնելու մի փորձ է արել պրոֆ. Յ. Ղ. Միրզոյանը իր «Նարեկացիագիտական հետազոտություններ» (Երևան, ԵՊՀ հրատ., 2010, 395 էջ) աշխատության մեջ, որը շուրջ տասը տարվա ընթացքում հեղինակի հրապարակած հոդվածների ժողովածու է: Սկզբում ականա, այնուհետև ի խորոց սրտի և մտքի պրոֆ. Միրզոյանը թափանցել է Նարեկացու աշխարհը և նարեկացիագիտության ոլորտը՝ բացահայտելով նոր փաստեր, նորովի ընթերցելով Նարեկի էջերը, նոր մանրամասներ հայտնաբերելով Նարեկացու կյանքի, գործունեության և ստեղծագործությունների մասին: Հոդվածները նախապես չեն ծրագրվել, այլ ծնվել են ուսումնասիրության ընթացքում: Այսինքն՝ ոչ թե հեղինակն է իշխել նյութի վրա՝ իր կամքն ու գիտելիքը պարտադրելով դրան, այլ նյութն է նրան առաջնորդել՝ հուշելով և ցույց տալով լաբիրինթոսից դուրս գալու ելքերի մասին:

Չետազոտությունների բնույթն այնպիսին էր, որ հեղինակը ստիպված էր վերանայել ու վերագնահատել Նարեկացու և Նարեկի հետ կապված մասնագիտական գրականության մեջ արմատավորված որոշ տեսակետներ, բանավիճել վաստակաշատ նարեկացիագետների հետ, իր դրույթները հիմնավորելու և համոզիչ դարձնելու համար բերել նույնիսկ պահանջվածից շատ փաստարկներ և օրինակներ: Ընթերցողին ուղղված **«խոսքում»** հեղինակը գրում է. «Ժողովածուում ամփոփված հոդվածներում փորձել եմ հայ գրականության մեծագույն հանճարի կյանքին, գործունեությանը և գրական ժառանգությանը նայել ավանդականից փոքր-ինչ տարբեր հայացքով, որը հնարավորություն է տվել ի հայտ բերելու նոր փաստեր, իսկ «Մատեան ողբերգութեան» գլուխգործոց երկում տեսնելու նոր իրողություններ և դրանց հիման վրա կատարելու միանգամայն նոր եզրակացություններ: Հարկավ, սա բնավ չի նշանակում, թե ես իսպառ բացառել եմ նարեկացիագիտության շուրջ հազարամյա ավանդույթը: Ընդհակառակը, շատ հաճախ ես պարզապես շարունակել ու զարգացրել եմ ավանդական հարցադրումները՝ հասցնելով դրանք տրամաբանական ավարտի» (էջ 5):

Անկասկած, նարեկացիագիտության մեջ նոր խոսք ասել կամ հակադրվել գոյություն ունեցող տեսակետներին նախևառաջ նշանակում է քաջածանոթ լինել ոչ միայն մասնագիտական գրականությանը, հրապարակի վրա գտնվող նարեկացիագիտական հետազոտություններին, այլև ամենայն խորությամբ ծանոթ լինել Նարեկացու դարաշրջանի ոգուն և բանաստեղծի, հոգևորականի, աստվածաբանի ու փիլիսոփայի ստեղծագործությունների խորքային կողմերին: Ավելին, ոչ միայն քաջածանոթ լինել, այլև ժամանակ գտնել և կարողանալ խորամուխ լինել այդ անծայրածիր աշխարհի մեջ:

Բացի դրանից՝ հայտնի և անհայտ իրողությունների նորովի իմաստավորումը ենթադրում է մի շարք գիտաճյուղերի՝ լեզվաբանության, գրականագիտության, պատմության, փիլիսոփայության տվյալների, նյութերի ու մեթոդաբանական մոտեցումների օգտագործում, ինչը տեսնում ենք գրախոսվող ժողովածուում: Իսկապես, եթե մինչև հիմա նարեկացիագիտության մեջ գերիշխել է նեղ մասնագիտական մոտեցումը, ապա այս հետազոտության մեջ տարբեր գիտությունների տեսանկյունից են քննարկվել վիճահարույց հարցերը:

Թեև ժողովածուում հեղինակը հոդվածները դասավորել է ժամանակագրական կարգով՝ նարեկացիագիտական իր հետաքրքրությունների ծավալման ընթացքը պահպանելու նպատակով, սակայն տվյալ դեպքում նպատակահարմար է առանձնացնել ժողովածուում դիտարկված հիմնական թեմաները: Դրանք են՝ ա) Նարեկացու կյանքը և գործունեությունը, բ) Նարեկացու ստեղծագործությունները, գ) Նարեկը, դ) Նարեկացու լեզվաշխարհը, ե) Նարեկացու գրական ժառանգությունը, զ) Նարեկացու ազդեցությունը հետագա դարերի մատենագրության վրա: Հարկ է նշել, որ թեև այս թեմաները ըստ բովանդակության իրարից տարբեր են, սակայն տրամաբանորեն շաղկապված են, ավելին՝ կան մի քանի առանցքային գաղափարներ, որոնք տարբեր թեմաների լուսաբանման գործում էական դեր են խաղում:

Առաջին հերթին անդրադառնամք Նարեկացու կյանքին ու գործունեությանը վերաբերող թեմային, քանի որ դա արծարծելիս հեղինակը բերում է

Նոր փաստեր, որոնց միջոցով մի կողմից ճշգրտում է Նարեկացու ծննդյան թիվը, ի հայտ բերում կենսագրական նոր իրողություններ, մյուս կողմից՝ նորովի է ընթերցում և մեկնաբանում Նարեկի որոշ հատվածներ: Նոր փաստերը նա հիմնականում քաղում է ոչ թե նորահայտ աղբյուրներից, այլ Նարեկացու ստեղծագործություններից: Ինչպես հայտնի է, միջնադարյան հեղինակները, հատկապես բանաստեղծները, հաճախ էին դիմում ծածկագրության հնարքին: Նրանք հիմնականում ծածկագրում էին անձնական տվյալներ՝ իրենց անունը, ծննդյան թիվը, կենսագրական կարևորագույն փաստերը և այլն: Ծածկագրություններով ու այլաբանություններով հարուստ է Նարեկացու «Մատենանոցի ստեղծագործությունը»: Պրոֆ. Միրզոյանի կարծիքով՝ Նարեկացին օգտագործել է ինչպես լեզվական, այնպես էլ մտածական ծածկագրության ձևեր. «Բացառիկ վարպետությամբ օգտվելով թե՛ մեկի և թե՛ մյուսի ընձեռած անսպառ հնարավորություններից՝ բանաստեղծը կարողացել է ծածկագրել ոչ միայն պատմական դեպքերը, դեմքերը, փաստերն ու իրադարձությունները, այլև մարդկային հարաբերությունները, վարքն ու բարքը, բնավորություններն ու սովորույթները, գործողություններն ու գործելակերպը» (էջ 37): Այդ ծածկագրությունների մի մասի վերծանման միջոցով պրոֆ. Միրզոյանը ի հայտ է բերում Նարեկացու կենսագրությանը վերաբերող կարևոր փաստեր, մասնավորապես ծննդյան թիվը (945 թ.), կուսակրոն քահանա ձեռնադրվելու թվականը (976 թ.), գործունեության բուռն շրջանը (980-992 թթ.), կարգալուծվելու կամ պատիժ ստանալու թվականը (997 թ.), հոր՝ Խոսրով Անձևացու ծննդյան (911 թ.) և մահվան (961 թ.) տարեթվերը, Նարեկի տարբեր գլուխների գրման տարեթվերը և այլն: Այս կապակցությամբ հետազոտողը բերում է գաղտնագրությունների ընթերցման բազմաթիվ փաստեր, որոնց մի մասը վերծանվում է այնքան անակնկալ ու անսպասելի, որ առաջին հայացքից բռնազբոս, արհեստական մեկնաբանության տպավորություն է թողնում: Օրինակ՝ Նարեկի ԽԶ գլխի հետևյալ տողերից՝ «Եւ արդ, ընդէ՞ր կորուսեր զփառսն երկնաւորս, // Իբր նախաստեղծն երբեմն՝ զվիճակն երկաւոր յԱդին, դարաստանի», իսկ ավելի ճիշտ այդ տողերի մի բառից՝ «յԱդին», վերծանում է Նարեկացու կուսակրոն քահանա ձեռնադրվելու թվականը (Ադին բառի տառերի փոխարեն տեղադրենք իրենց թվային արժեքները, կունենանք՝ Ա-1, դ-4, ի-20, ն-400: Դրանք գումարելով՝ կստանանք 425, որին ավելացնելով 551, կստանանք 976, որն էլ, ըստ հետազոտողի, Նարեկացու կուսակրոն քահանա ձեռնադրվելու թվականն է): Բերենք ևս մի նմուշ, որի դեպքում նույնպես մեկ բառի վերծանության միջոցով արվում է անսպասելի բացահայտում: Նարեկի Ի է գլխում «մեղայ» բառը օգտագործվում է 36 անգամ, ընդամին, Բ ենթագլխի բոլոր տողերը (11) սկսվում և ավարտվում են «մեղայ» բառով: Կատարելով թվաբանական գործողություններ, տեղադրելով տառերի թվային արժեքները («յ»-ից որպես կիսաձայն, տվյալ համատեքստի նոր ընթերցման համաձայն՝ պետք է վերցնել կես արժեքը), դրանց գումարելով 551 թիվը՝ ստանում ենք 997, որը, ըստ Միրզոյանի, Նարեկացու պատժվելու թվականն է: Հարկ է նշել, որ նմանաբանույթ եզրակացությունների նա հանգում է ոչ միայն բառերի կամ արտահայտությունների պատահական գաղտնագրվածման միջոցով, այլև հաշվի առնելով տվյալ գլխի, ենթագլխի կամ առանձին հատվածի բովանդակությունը: Ա-

վելին՝ հենց այդ բովանդակության նորովի ընթերցումն է նրան հնարավորություն տալիս վերծանելու գաղտնագրության իմաստը:

Իհարկե, անչափ հետաքրքիր են մանաստիպ ծածկագրությունների վերծանման փորձերը, մանավանդ որ դրանք մեզ հաղորդում են լրացուցիչ տեղեկություններ Նարեկացու մասին: Սակայն հարկավոր է նաև զգուշանալ գոնե այն առումով, որ միջնադարյան երկերում ծածկագրությունները, այլաբանությունները ու խորհրդանշանները կարող են իմաստային տարբեր շերտեր ունենալ:

Բնականաբար, այսպիսի խորքային, բժախնդիր վերլուծություններից հետո հնարավոր չէ չանդրադառնալ նարեկացիագիտության մեջ հաճախ արծարծվող կարևորագույն թեմաներից մեկին՝ Նարեկի կառուցվածքին, հատկապես ՂԲ և ՂԳ գլուխների տեղակայման հարցին: Նախ, պրոֆ. Միրզոյանը նկատում է, որ Նարեկը ստեղծվել է շուրջ երեք տարում: Իսկ դա նշանակում է, որ այդ ընթացքում փոփոխվել են բանաստեղծի հոգեվիճակները, տրամադրությունները և մտածելակերպը, որոնք արտացոլվել են Նարեկում՝ պայմանավորելով դրա կառուցվածքային առանձնահատկությունները: Այլ խոսքով, այդ ներաշխարհային ու ներաձնական փոփոխություններով կարելի է բացատրել Նարեկի կառուցվածքը: Երկրորդ, որը առավել ուշագրավն է, նա ենթադրում է, որ Նարեկացին «Մատեանը» հղացել ու իրականացրել է Ս. Պատարագի մանությանը ու տրամաբանությանը: «Այդ է հուշում ոչ միայն այն փաստը, - գրում է նա, - որ Մատյանի առաջին գլխից մինչև վերջին գլուխը անընդհատ հնչում է պատարագի գաղափարը, և բանաստեղծն իրեն համարում է կենդանի զոհ, իսկ Մատյանը՝ «Կամաւորական նուէր բանական զոհիս», այլև Մատյանի և Ս. Պատարագի կառուցվածքների համեմատությունը» (էջ 74): Հիմք ընդունելով Մատյանի և Պատարագի մանության գաղափարը, պրոֆ. Միրզոյանը հանգում է այն եզրակացության, որ ինչպես Պատարագը ավարտվում է գոհության աղոթքով, այնպես էլ Մատյանը պետք է ավարտվի գոհություն արտահայտող աղոթքով: Իսկ Մատյանի միայն ՂԲ գլուխն է, որ սկսվում է «Գոհանան զքեմ» դարձվածքով ու ամբողջությամբ զրված է գոհություն արտահայտող տրամադրությամբ, որը շարունակվում է նաև ՂԳ գլխում: Հետևաբար, ՂԲ և ՂԳ գլուխները պետք է տարվեն Մատյանի վերջը և, դրանով իսկ, կվերականգնվի նրա խաթարված կառուցվածքը:

Պրոֆ. Միրզոյանը նկատում է, որ ինքնակենսագրական նյութը Նարեկում կարևոր տեղ է զբաղեցնում, մինչդեռ նարեկացիագիտության մեջ այս հանգամանքը կարծես թե անտեսվել է կամ այնքան էլ չի կարևորվել: Ժողովածուում զետեղված հոդվածներից մեկը վերնագրված է **«Աղոթագի՞րք, թե՞ «Մատեան ողբերգութեան»**, որում քննարկվում է այն հարցը, թե ինչպես պետք է ընկալել, հասկանալ ու մեկնաբանել Նարեկի բովանդակությունը: Արդյոք դա Աղոթագի՞րք է, ինչպես պնդում են շատ նարեկացիագետներ, մասնավորապես Զ. Նալյանն ու Գ. Ավետիքյանը, թե՞ իսկապես Ողբերգության Մատյան է, այսինքն՝ անհատի, երկրային մարդու ողբերգական կյանքի կամ մարդկային կյանքի ողբերգական դրվագների պատկերման մատյան: Զ. Միրզոյանի համոզմամբ, եթե Մատյանը դիտում ենք սոսկ որպես Աղոթագիրք, նշանակում է այն ընկալում և մեկնաբանում ենք գերազանցապես կրոնական ու աստվածաբանական տեսանկյունից՝ անտեսելով նրա երկրային ու աշ-

խարհիկ խորքը: Մինչդեռ, եթե Մատյանը դիտվի ոչ թե որպես միայն Աղոթագիրք, այլ նախ և առաջ իբրև իսկապես ողբերգություն, ինչպես հեղինակն ինքն է անվանել, այդ դեպքում «շատ ու շատ բան կհասկացվի այլ կերպ, քան հասկացվել է մինչև այժմ, իսկ որ ավելի կարևոր է, այլևս չի ասվի, թե Մատյանում գրեթե ոչինչ չկա բանաստեղծի անձնական կյանքի ու ապրումների մասին, այլ, ընդհակառակը, այսուհետ այն կդիտվի նաև հեղինակի ունեցած անձնական ապրումների գեղարվեստական այնպիսի վերարտադրություն, որ հնչում է որպես համամարդկային ողբերգություն. մի բան, որ եղել ու մնում է գրական ցանկացած հանճարեղ ստեղծագործության հիմնական պայման ու չափանիշ» (էջ 161): Իհարկե, այս մտեցումը նոր չէ: Օրինակ՝ գրականագետ Յ. Թամրազյանը, անդրադառնալով այս հարցին, նկատում է, որ թեև Նարեկացին շոշափում է կրոնական թեմաներ, սակայն «նրա բուն խոսքը վերաբերում է երկրային գործերին, նա պատմում է իր մեղավոր ու տանջահար կյանքի և երկրի մարդկանց ծանր վիճակի մասին: Իր ողջ տարերքով նա մնում է իբրև երկրային երևույթ, որին անվերջ մտահոգում է աշխարհի ու մարդկանց ճակատագիրը» (Յր. Ս. Թամրազյան, Յայ քննադատություն, Գիրք Բ, Երևան, 1983, էջ 96-97): Պրոֆ. Միրզոյանի հիմնական փաստարկն այն է, թե Նարեկացին հայտնում է այնպիսի կենսագրական փաստեր, որոնք անհարիր են աղոթքի բնույթին: Իմ կարծիքով ավելի ճիշտ կլինեի հոդվածի վերնագրում «թե» շաղկապը փոխարինել «և» -ով. Նարեկը և՛ աղոթագիրք է, և՛ Ողբերգության մատյան, մանավանդ որ դրանք իրար ոչ թե հակասում են, այլ լրացնում: Բանն այն է, որ, ըստ միջնադարյան պատկերացումների, հենց աղոթքի մեջ և աղոթքի միջոցով պետք է բացահայտվի մարդկային կյանքի ողբերգականությունը: Քրիստոնեական մարդաբանության համաձայն՝ Աստված մարդուն ստեղծել է որպես հոգու և մարմնի միասնություն, երկու հակադիր բնությունների կատարյալ ու ներդաշնակ ամբողջություն: Սակայն մեղսագործությամբ խախտվում է այդ աստվածային ներդաշնակությունը. մարդու մեջ մարմինն ու հոգին վերածվում են երկու ներհակ, հակամարտող սկզբների: Մարդը, որը շարունակում է մեղքեր ու հանցանքներ գործել, հայտնվում է անելանելի, ողբերգական կացության մեջ. հոգին ձգտում է նրան տանել դեպի աստվածային աշխարհը, իր նախկին «տունը», իսկ մարմինը՝ դեպի նյութական, երկրային աշխարհը: Մարդը տոչորվում է այս երկու հակադիր սկզբների անվերջանալի պայքարից, որոնք «թեև հարազատ, բայց անհաշտելի ոսոխների պես դավաճանաբար ջարդում են իրար»: Եվ որպեսզի մարդը վերագտնի իր հոգեկան հանգստությունն ու խաղաղությունը, պետք է մշտապես դիմի աղոթքի: Աղոթքը մարդուն հնարավորություն է տալիս անմիջականորեն հաղորդակցվելու Աստծու հետ: Աղոթքը հնարավորություն է տալիս մարդուն անկեղծորեն մեղանչելու և զղջալու, Աստծու առաջ բացելու իր սիրտը: Աղոթքը հոգևոր նորոգության ճիգ է և պիտի ուղեկցվի, ըստ ս. Նեղոս Սինայեցու, «երկիւղով, զղջմամբ, հոգեւորի անձկութեամբ եւ անմռունչ հեծութեան մեջ յանցանքները պատմելով»: Այդ հանցանքները կարող են անհավատալի ու արտառոց լինել, միևնույնն է, աղոթքի միջոցով, Աստծու հետ ի խորոց սրտի զրույցի ընթացքում պետք է դրանք ներկայացվեն ու բացահայտվեն: Այսպիսով, եթե անգամ թվում է, թե Նարեկացին աղոթքի մեջ ներմուծում է նոր շերտեր, թվարկում է կարծես թե աղոթքի բնույթին անհարիր մտքեր, ապա դա պետք է ընկալել որպես աղոթքի բովանդակային հորիզոնի ընդլայնում:

Գրախոսվող ժողովածուում կարևոր տեղ է գրավում Նարեկացու գրական ժառանգությանն առնչվող հարցերի քննարկումը: Ինչպես հայտնի է, Նարեկացու մատենագրական ժառանգության մեջ կան մի շարք գործեր, որոնց հեղինակային պատկանելության հարցը վիճարկման առարկա է: Դրանցից է «**Համառատիւք բան խրատու**» բարոյափիլիսոփայական երկը, որը, որոշ նարեկացիագետների կարծիքով, չի պատկանում Նարեկացու գրչին: Հետաքրքիրն այն է, որ «խրատը» թե՛ Նարեկացուն վերագրողները և թե՛ դա հերքողները չեն փորձել համեմատություն անցկացնել ստուգապես Նարեկացուն պատկանող երկերի և «խրատ»-ի բովանդակության միջև: Մինչդեռ պրոֆ. Միրզոյանը «խրատ»-ի պատկանելության հարցը լուծելու համար բովանդակային, լեզվական, բանասիրական, բարոյափիլիսոփայական բնույթի համեմատություններ է անցկացնում «խրատ»-ի ու Նարեկացու մյուս գործերի՝ «Մեկնութիւն Երզ երգոցի» և «Մատեան ողբերգութեան» միջև և գտնում ակնհայտ նմանություններ ու ընդհանրություններ: Այս կարգի բացահայտումների հիման վրա նա եզրակացնում է, նախ, որ «խրատը» Նարեկացու գրչի լավագույն արգասիքներից է և այսուհետ պետք է դիտվի նրա մատենագրական ժառանգության անկապտելի մաս», երկրորդ, որ այդ աշխատությունը «ամփոփում է Նարեկացու աշխարհայացքի բնորոշ գծերի խտացած շարադրանքը, որի ուսումնասիրությունը կարող է մեծապես նպաստել ինչպես հանճարեղ բանաստեղծի գրական-մատենագրական ժառանգության, այնպես էլ հատկապես նրա գլուխգործոցի՝ «Մատեան ողբերգութեան» պոեմի հիմքում ընկած կրոնաաստվածաբանական և բարոյափիլիսոփայական սկզբունքների բացահայտմանը» (էջ 143):

Այսպիսով, Յ. Միրզոյանին հաջողվել է լուծել Նարեկացու գրական ժառանգության հետ կապված վիճելի հարցերից մեկը: Ավելորդ չէ նշել, որ նրա տեսակետը արդեն ընդունելություն է գտել (տե՛ս, օրինակ, *Յր. Թամրազյան*, Գրիգոր Նարեկացին և նորպլատոնականությունը, Երևան, 2004, էջ 76-77): Դրա վկայություններից է նաև այն փաստը, որ «Համառատիւք բան խրատու» բարոյափիլիսոփայական աշխատության՝ Յ. Միրզոյանի պատրաստած քննական բնագիրը լույս է տեսել «Մատենագիրք հայոց» մատենաշարի Գրիգոր Նարեկացու երկերը պարունակող ԺԲ հատորում (տե՛ս «*Մատենագիրք Հայոց*», ԺԲ հատոր, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 1009-1084):

Ժողովածուում զետեղված են նաև հոդվածներ, որոնցում հեղինակը անդրադառնում է Նարեկացու աշխատությունների արժևորմանը («Սողոմոնի «Երզ երգոցի»՝ Նարեկացու մեկնության արժեքը») և դրանց գրության ժամանակին («Նարեկացու «Ի սուրբն Յակոբ» ներբողի գրության ժամանակի հարցը», «Պատմաբանասիրական դիտողություններ Նարեկացուն վերագրված ճառի մասին»), Նարեկի որոշ արտահայտությունների նորովի մեկնաբանության միջոցով ճշգրտում դրանց իմաստը («Նարեկացիագիտական կարևոր ճշտում»), բացահայտում նոր շերտեր Նարեկացու ստեղծագործություններում («Աշխարհիկ մի երգ Նարեկացու Մատյանում», «Գրիգոր Նարեկացին և հայ առակագրությունը»), ցույց տալիս Նարեկացու ազդեցությունը հետագա դարերի մատենագրության վրա («Նարեկացու լեզվական ազդեցությունը հետագա դարերի մատենագրության վրա»): Երկու հոդված է նվիրված Գրիգոր Տղայի կյանքին ու գործունեությանը, մասնավորապես Գրիգոր Տղայի և Նարեկացու ստեղծագործությունների առնչություններին:

Գրախոսվող ժողովածուում առանձնահատուկ տեղ են գրավում Նարեկացու լեզվաշխարհին ու բառաշխարհին նվիրված հետազոտությունները: Դրանք արժեքավոր են հատկապես այն առումով, որ ցարդ հրապարակի վրա չկա Նարեկացու ստեղծած բառերի քիչ թե շատ ամփոփ բառարան, որը հնարավորություն կտար ուսումնասիրելու բառաստեղծման նարեկացիական սկզբունքները, բացահայտելու լեզվաշինարարական նրա արվեստի գաղտնիքները: Այս բացը փորձում է լրացնել հեղինակը՝ զարմանալի բծախնդրությամբ ու բարեխղճությամբ, աներևակայելի, բացառիկ աշխատասիրությամբ կազմելով Նարեկացու ստեղծագործությունների Բառացանկը: Թվում է՝ Բառացանկը պարզապես բառերի ցանկ է, որը լավագույն դեպքում մեզ տեղեկություններ է տալիս Նարեկացու բառաշխարհի ու բառաստեղծման արվեստի մասին: Սակայն, պարզվում է, որ դա ավելին է, քան միայն բառերի ցանկը: Բառացանկը հնարավորություն է տվել հեղինակին անելու մի շարք կարևոր եզրահանգումներ.

ա) Նարեկացին բառաստեղծմամբ զբաղվել է իր բոլոր ստեղծագործություններում, որը Մատյանում փայլատակել է իր ողջ հզորությամբ՝ տալով ավելի քան 820 նորաստեղծ բառ,

բ) բառացանկը կարող է օգտակար լինել նաև Նարեկացու ստեղծագործությունների ժամանակագրության, թեկուզև մոտավոր, վերականգնման գործում,

գ) բառացանկը կարող է լուրջ կռվաններ ունենալ ավանդաբար Նարեկացուն վերագրված առանձին աշխատությունների հեղինակային պատկանելության հարցը լուծելու համար,

դ) բառացանկը հնարավորություն է տալիս պնդելու, որ Նարեկի ՂԲ և ՂԳ գլուխները ոչ թե հավելել են ուրիշները, այլ դրանք անվերապահորեն պատկանում են Նարեկացուն, որովհետև նրա «բառաստեղծական արվեստը Մատյանում ամենից ուժգին փայլատակել է հենց այս գլուխներում՝ ՂԲ գլխի նորաստեղծ բառերի թիվն անցնում է 50-ից, իսկ ՂԳ գլխինը՝ 100-ից» (էջ 166),

ե) բառացանկը ի հայտ է բերում Նարեկյան դպրոցի բառաստեղծման սկզբունքները:

Ավելորդ չէ նկատել, որ գիտական հասարակայնությունն առանձնապես բարձր է գնահատել Նարեկացու բառաստեղծական արվեստին նվիրված այդ հետազոտությունները, որոնք, ի դեպ, լույս են տեսել նաև առանձին գրքով («Գրիգոր Նարեկացու բառաստեղծական արվեստը», Երևան, 2006) և 2008 թ. արժանացել ԶԶ Թեքեյան մշակութային միության «Չայկաչեն Ուզունյան» երկամյա մրցանակի:

Վերոգրյալը մեզ հիմք է տալիս պնդելու, թե լույս է տեսել արժեքավոր մի հետազոտություն, որը, լինելով լուրջ ներդրում նարեկացիագիտության մեջ, էապես հարստացնում է մեր գիտելիքները Նարեկացու և նրա ստեղծագործությունների մասին՝ նարեկացիագիտությունը բարձրացնելով նոր մակարդակի: Անշուշտ, հեղինակն իր հետազոտությունների մեջ լուծել է որոշակի խնդիրներ, պատասխան տվել մի շարք վիճահարույց հարցերի: Բայց միայն դա չէ նրա հետազոտության գիտական արժանիքը: Ոչ պակաս արժեքավոր է նաև այն, որ նրա կողմից տրված լուծումներն ու պատասխանները կարող են առիթ դառնալ նոր քննարկումների ու բացահայտումների և խթան հանդիսանալ նարեկացիագիտական նոր հետազոտությունների համար: